ՓԱՐԻԶ

ԼՐԱԳԻՐ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ
ԵՒ ՊԱՏՄԱՆԵՐ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Այս լրագիրն երբեմն լաբեալը մ անդամ անգամ օրէն հրատարակուի։

Տարեւոյն գինն է Փարիզի համար . . . . . ֆր. 20
Տեղեւոյն . . . . . » 24
Անգլիոյ, Աւստրիոյ եւ Պրուսիոյ » 25
Աւստրիոյ եւ Եգիպտոսի . . . . . » 26
Ռուսաստանի եւ Մոլդաւիոյ . . . . » 26
Անդրիկիոյ, Հոլանդիոյ եւ Ճաւայի . . . » 30
Իւրաքանչիւր թերթն առանձին՝ մէկ ֆրանկ։
Սարդարեան-Ինճեանները պարիզեցիներէն զատ ոչոք եւ չունի գործակալ (ներկայացուցիչ) Հնդկաստանի։
Լրագրոյս վերաբերեալ նամակներն եւ դրամները այս օրինակ հասցէին երբեմն-երբեմն են։

M. A. Mourad, rue du Dragon, 26, à Paris.

Եւ անոնց ցօրեայցն նախէր պէտք է վճարիլ լինին։



ԱՆՈՒԱՆՔ
ԱՐԳՈՅ ԳՈՐԾԱԿԱԼԱՅ

Անդրիանուպոլիս, Տ. Մկրտիչ Քիւրքիկեան։
Զմիւռնիա, Տ. Գրիգոր Մ. Հ. Եւայեան։
Բերիա (Հալեպ), Տ. Յ. Ս. Քիւրտէքեանոֆ։
Նիկոմիդիա, Պ. Տիգրան Մուրատեան։
Թոքատ, Տ. Թոփուզ Ֆէուլլեան։
Իզմիր, Տ. Ա. Յակոբ Յովսեփեան։
Տրապիզոն, Տ. Պօղոս Կիւրճեան։
Եւ (Մօլդաւիա), Տ. Յակոբ Պէյզէլեան։
Վիեննա, Տ. Ն. Կ. Մարգարեան։
Թէհրան, Տ. Մարգարէ Թորլանեան։
Մանչեսթր, Տ. Գասպար Յ. Յովսէփեան
Անգլիոյ, Տ. Ս. Մ. Մինասեան։
Պուխարէստ եւ Ճաւա, Տ. Գ. Նահապետեան։
Կալկաթա, Տ. Յովհաննէս Աւետեան։

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 87 | 1863 | 13 ՄԱՐՏ

Հետեւեալը Մասիսի մէջ կկարդանք.

«Անցեալ շաբաթ օրը մայրաքաղաքիս ամէն եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն եւ աւագ քահանայները Պատրիարքարանի դուռները եւ ազգային ներկայ անկարգ եւ տարտամ վիճակին վրայ խորհելով՝ որոշեցին կղերական պատգամաւորութիւն մը ղրկել Բ. Դուռը եւ կայսերական բարեխնամ կառավարութեան դիմումը հայցել։

» Այս որոշման համեմատ, չորեքշաբթի օրը Գեր. Տեղապահ սրբազան հայրը, Գեր. Ներսէս եպիսկոպոսը, Ս. Երուսաղէմից Աթոռոյն փոխանորդ արժանապատիւ Սահակ վարդապետը, ուրիշ երկու վարդապետ, եւ ութ աւագ քահանայք, պատրաստեցին գործոց պաշտօնեայ Բարձր. Ասլի փաշային ներկայացեր, եւ ընդհանուր հայ կղերին խնդրուածքը յայտներ են։

» Բարձր. Ասլի փաշան իւր սովորական մարդասիրութեանը համեմատ պատուաւոր ընդունելութիւն մը ըրեր է արժանապատիւ պատգամաւորներուն, եւ կայսերական կառավարութեան ազգիս վրայ ունեցած հայրական անդուլ խնամոյն եւ հոգածութեանցը արժանի յայտեր տալով՝ խոստացեր է մինչեւ յառաջիկայ երկուշաբթի օրը վերջնական որոշումը հաղորդել։»

Կերեւի թէ այս խոստումն ալ անկատար մնացած է, վասն զի Մասիսի հետեւեալ թիւերուն մէջ անոր վերաբերեալ խօսք մը չենք գտներ. բայց Հայերը վարժեցան Դրան խոստումներուն. վասն զի այս առաջինը չէ որ անոնք ապարդիւն կմնան։ Մենք անցեալներն ըսինք իրենց ընելիքը, եւ կամայ ակամայ վերջն անոր կայանք պիտի տուի։

Գաղղիական հայասիրութեան նոր եւ շքեղ օրինակ մըն ալ տեսնուեցաւ այս օրերս ի Փարիզ։

Մեծարգոյ Պ. Տիւրրաթօ (M. Duprato) անուն երեւելի հեղինակը, որ արդէն իւր երկու թատերական գլխաւոր գործերովն զմայլեցուցած է Փարիզու հասարակութիւնը, այս օրերս սքանչելի նուագաւոր թատերգութիւն մըն ալ մատոյց մայրաքաղաքիս Օփէրա-Գոմիք կայսերական հռչակաւոր թատրոնին, Լա Տէէս է ը Պէռժէ (La Déesse et le Berger) անուանեալ, որ թարգմանի՝ Դիցուհին եւ Հովիւը, եւ զոր կնուիրէ Աղնուական Հայ օրիորդի մը, որ է Տաճեան Վ. սեմաչուբ Պօղոս Պէյի թոռն եւ Մեծապատիւ Առաքել Էֆէնտիի դուստր՝ Աղնուափայլ Երմոնեայ Հանըմ ուսումնական օրիորդը։

Ասիկայ դիցաբանական թատերգութիւն մըն է, որուն սքանչելի երգերուն եւ դեղեցիկ տեսարանին անընդհատ ծափահարութեամբ հանդիսատես կղնի խուռն բազմութիւն։

Թատերգութեան տեսարանն է Նաքսոս կղզին՝ Պաղոսի տաճարին բոլորտիքն եղած դիցանուէր անտառին մէջ, ուր Պաթիլլ այծարածը կուգայ իր սիրելին փնտռելու եւ իր սիրահարական վիշտերն երգելու։ Ինքը Պաղոսի որդին է, բայց չգիտեր եւ ոչ իր հայրը գիտէ. սակայն գինքը խնամող նայատն ի հարկին հրդեհ եղնելով՝ գաղտնիքը կբացայտէ, եւ Պաղոսի հաւանութեամբը Պաթիլլ կամուսնանայ իր սիրելւոյն հետ, որ է Մամա՝ Փալէմոն բրմապետին դուստրը։

Հայկական օրիորդի մը անուան նուիրեալ գործ մը մայրաքաղաքիս մէկ երեւելի թատրոնին մէջ ներկայացուելն անշուշտ այս առաջին անգամն է, եւ ոչ սակաւ ուրախութիւն կպատճառէ մեզ եւ ամէն Հայոց։

Եգիպտոսի Գեր. Ս. Աստուածորդին հանար Զմիւռնիոյ Արշարուսոյն եւ Ծաղիկի մէջ մէկզմէկու հակառակ եղած հրատարակութեանց վերայ լրագրոյս 82 թուովը մեր կարծիքը խօսեցանք։ Ծաղիկն անոնց պատասխանել հաճեցաւ եւ մեզի երկու ընդարձակ յօդուած նուիրեց։ Այս յօդուածներուն մէջի առարկութեանցը մի առ մի պատասխանել ուզենք նէ՝ վերջը գալիք չունի. քանզի դրածներս կարծեմք հարեւանցի կարդացուելով՝ շատ այլակերպ մեկնութիւն տրուեր է անոր։ Ասիկայ ապացուցանելոյ համար՝ երկու օրինակ Ծաղիկի միայն առաջին յօդուածին առաջին տողերէն դնենք հոս, որով յուսամք թէ մնացածներն ալ այսպէս լինելնոյն կհամոզուի մեր Արժանայարգ Պաշտօնակիցը։

Ծաղիկը կըսէ թէ, «Փարիզ . . . Ծաղկի և Արշարուսոյ մէջ ծագած վէճին իրաւարար և անաչառ դատաւոր » կանգնիլ ուզելով՝ իր դաղումները Ֆրանսայի հրատարակութեան օրինաց վրայ կը կռթնէ և վիճաբանող » կողմանց իւր վճիռները կու տայ։»

Մեր դրածին չորեքտասաներորդ տողին մէջ ըսուած է թէ, «Ազգային Վարչութեան կվերաբերի եղելու » թիւնը քննել և վճռել. . .» Տասներեքին տող անդին նոյն խօսքին կրկնութիւնը կայ՝ այսպէս. «Ազգային » Վարչութիւնը պարտի վճռել։»

Դարձեալ Ծաղիկն իր վերոյիշեալ տողերուն մէջ կհամարի թէ մենք «իրաւարար և անաչառ դատաւոր կանգնել ուզեր» ենք։

Ըսել հա՞րկ է, որ մենք առանկ պաշտօն չենք առած վրանիս։ Հապա ինչո՞ւ Ծաղիկը ծայրէ ի ծայր ասանկ բաներ խօսելով մեզ կյողնեցընէ։ Մենք ըսած ենք թէ, յիշեալ երկու օրագրաց մի և նոյն անձի վերայ իրարու հակառակ հրատարակութիւնքն հասարակութեան շփոթութիւն պատճառելով՝ չգիտնար թէ որոյ հաւատայ, ուստի թէ՝ հասարակութիւնը տարակուսանքէ և թէ Ծաղիկը պատասխանատուութենէ զերծ մնալոյ համար՝ ըսեր ենք թէ Ս. Աստուածորդին յանցաւորութիւնը նախ ազգին դատաւորացը վճռել տրուի և յետոյ անոնց վճիռը հրատարակուի։ Այնուհետև այս մասին Դաղղիոյ մէջ բըռնուած ընթացքը մեզի հետեւութեան օրինակ ընելն ազգիս համարեր ենք։ Եւ ի վերջոյ, այսուհետև անարժան կարգաւորներ չունենալոյ համար ինչ ընել հարկ ըլլալուն վերայ մեր դիտցածն ըսել համարձակեր ենք։ Ազգիս կը տեսնուի թէ այս տեղ դատաւոր կանգնիլ կամ վճիռտալ չկայ, և ոչ իսկ Ֆրանսայի օրինաց վերայ կռթնիլ. այլ լոկ կարծիք յայտնել մըն է, զորս ընդունելոյ կամ չընդունելոյ կատարեալ ազատութիւն ունի Ծաղիկը։

Խնդիրը չերկարելոյ համար, փութանք Ծաղիկին մէկ կարևոր խօսքին, ամենուն տրմատն է, պատասխանը տալ և վերջացընել։

Ծաղիկը քանի մը տող վարը կգանգատի թէ եկեղեցականաց անարժան վարմունքէն շատ անգամ ազգին դատաւորացը բողոքուեր է, բայց ունկնդրութիւն չէ եղեր և յանցաւորը չէ պատժուեր։

Ասիկայ քիչ-շատ մենք ալ գիտէինք, և անոր համար է որ դրածներս մէջ երկու տող բողոքն ազդոյ կերպիւ ընել առաջարկած էինք, այսպէս ըսելով. «դատն ազդուս » թեամբ ներկայացընել ազգին դատաւորացը» և դարձեալ թէ, «Ազդութեամբ խնդրելու է ազգային Վար» չութենէն որ գայթակղութիւնը խափանել ջանայ։»

Իսկ եթէ դատաւորը բողոքանաց ունկնդրութիւն չըներ, տեղն ուրիշը կդնեն։

Եւ որովհետև կարդն եկեր է, սա հարցումն ալ ընեմք Ծաղկին թէ, ի՞նչ է մամուլին չանթը, որով ինք կհամարի պատժել յանցաւորութիւնը. և թէ այդ չանթէն Արշարուսոյ մամուլին քով ալ չի՞ գտնուիր, որ Ծաղկի մամուլին չանթերուն դէմ դնէ։ Եւ ան ատեն ի՞նչպէս կրնայ պատժուիլ յանցաւորութիւնը։

Ի վերջ բանիս, կհաւատանք Ծաղկին թէ, կշիռնիս երբէք «Արշարուսոյ կողմը հակել» չենք խորհած։

Մեծարգոյ Պ. Վիկտոր Լանկլուա հայագէտ Գաղղիացի բարեկամին այս օրերս նշանաւոր յօդուած մը հրատարակեց մայրաքաղաքիս Ռիվիւ տէ տեօ Մօնտ հանդիսին միջոցաւ՝ Թուրքատանի Հայերն ու Տօրոս լերին կոտորածները վերնագրով, որ առանձին ալ տպուեցաւ։

Մեծարգոյ Պ. Լանկլուայի՝ Հայոց ազգին մատուցած այս նոր ծառայութեան արժէքը բացատրելն աւելորդ կը համարինք, քանի որ յօդուածին թարգմանութիւնը, որ գիտնական Անձ մի կարեհամի ընել և մեզ առաքել, մեր Արդոյ Ընթերցողը հետզհետէ լրագրոյս մէջ կարդալով՝ ինքնին պիտի կարենան դատել։

ԹՈՒՐՔԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՆ
ԵՒ
ՏՕՐՈՍ ԼԵՐԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ

Արարեալ Պ. Վ. Լանկլուայի։

Ա։ Դասագիրք Պատմութեան Հայոց, արարեալ Պօղոսի Փափազեանց (հայերէն) ի Կոստանդնուպօլիս, 1862 ամի. — Բ։ Ազգային Սահմանադրութիւն Հայոց ի Կոստանդնուպօլիս և ի Պարիս, 1860 և 1862. — Գ։ Մասիս և Մինասեանի Էրզիկյան, հայ օրագիրներ Կոստանդնուպօլսի, Արշալոյս Արարատեան և Ծաղիկ Զմիւռնիոյ, Լուս և Փարիզ, Բազմավէպ Լազարեան. — Դ։ Դեպքեանական ձեռագիր նամակներ թարգմանեալ ի հայ բնագրէ. — Ե։ Զէյթունցիներու և Մարաշի Հայոց բողոքներն առ Բ. Դուռն և Կոստանդնուպօլիս եղեալ մեծամեծ Տէրութեանց դեսպանութիւններն ուղղեալ. — Զ։ Նամակներ և առանձին հաղորդակցութիւններ։

Եւրոպիոյ ուշադրութիւնն արթնցաւ յանկարծ Թուրքատանի Հայերու վերայ, որ, ինչպէս կերեւի, Թուրքաց քաղաքականութիւնն ընտրեր էր յատկապէս իրրեւ զոհեր իր Արեւելեան Քրիստոնէից վերայ ի գործ դրած կանոնաւոր և դառն հալածանաց ատեն։ Հայ անունով Եւրոպան դեռ երէկ կխմնար մէկ ցան ու ցրիւ վանականներու խումբ մարդոց, որ իրենց նիւթական շահէն զատ

ուրիշ բանի վերայ չէր խորհէր, որ շատ սակաւ կըլլայէր այն մեծամեծ ընկերական խնդիրներուն, որ կյուզեն այժմ աննշանի ձնշեալ ազգայնութիւններ։ Եւրոպան կիմանայ այսօր, որ Հայերն չորս միլիոն մարդոց համախմբութիւն մի կկազմեն, ստոյգ եւս, ամբողջ ազգ մի կյօրինեն։ Թուրքաստանի Հայերն, զատարար առնուած, երկու ու կէս միլիոն անհատներու միաբանութիւն մի կը ձեւացունեն։ Այս նշանաւոր և միաբանդ խումբս, զատ կապրի զինքն նեղօղ Թուրքերու մէջ, քրիստոնեայ է Մահմէտականաց առջեւ, արթուն և ազատասէր այս բարբարոսացս առջեւ, որ և ոտն առ ոտն ինքն իրեն կը պաշտպանէ անոնց դէմ թէ սահմանադրական իրաւանց միասամբ իր քաղաքական ազատութիւնն ստանալու համար, թէ Տօրոսի լեռներն, հրայան ի ձեռին, իր անկախութիւնն պահելու համար։ Թրքաց խորհրդարանի կեղծաւորիր խարդախութեանց եւ փտտեալ ննդութեանց այս ազգս կդիմագրէ խոհեմ և հաստատ քաղաքակարութիւն, և բաղի բօզուքներու հրասակայ դէմ, որոց առաքելութիւնն է սպանութիւն և աւարառութիւն, այս ազգս կդիմագրէ գիւղաղնական արութիւն։ Այս երկու առաքինութիւններս, անհնարին է, ուրանալ այսուհետեւ Թուրքաստանի Հայոց, որ և եւրոպական տիրակցութեան լինել պիտի ըլլան, երբոր կամենայ այն անոնց աջակցութեան համար ինչ և իցէ ձիգն ի գործ դնել Արեւելեան Քրիստոնէից իրաւունքն յաջողութեամբ պաշտպանելու համար։

Այս ձիգերս ի գործ դնելու այժմ ամենէն յարմար ատենն է։ 1862 թուականի վերջին ամիսներու մէջ Զէյթունի գաւառն, որ Կիլիկիոյ Տօրոս լեռներու մէջ կանգնի, սոսկալի կոտորածոց տեսարան եղաւ, որ և այս 1863 տարուանս սկզբանն ալ վերանորոգեցաւ Մուշ քաղաքին մէջ, որ Վանայ ծովի մօտերն է, որպէս թէ Եւրոպան նորէն սարսափի մէջ ձգելոյ և գրգռելոյ համար։ Այս կոտորածներս կշարունակեն այն արիւնային շղթայն, որոյ առաջին օղակներն եղան Ջիդդայի, Դամասկոսի և Լիբանանի խողովութիւններն, որ և չպիտի դադրին, մինչեւ որ Թուրքաց Տէրութիւնն իր արդար պատիժն չընդունի։ Ստոյգ է որ, եւրոպական մէկ մեծ ազգի քաղաքական ձգտումներն, որ յայտնի նուաճ քրիստոնէական է, թուի թէ, զանոնք կարդարացունեն անուղղակի, և անոր պաշտպանութիւնն մինչեւ ցայժմ ապահովեր է յանցաւորաց զայթակղեցուցիչ անպատժութիւնն, սակայն միւս այլ քաղաքականութիւն, յուսալի է, որ այսօր կամ վաղն, անոր զուգակշիռ հանդիսանայ, և այսպիսի պժգալի ավրառութեանց վերադարձն խափանէ։ Թրքաց կառավարութիւնն շատ անգամ Քրիստոնէից նկատմամբ հրապարակական խոստմունք ըրեր է Արեւմտեան մեծամեծ Տէրութեանց, յաւէտ Գաղղիոյ կայսերութեանն։ Ժամանակն եկաւ որ անիկէ Գիւլհանէի հաթթի-շէրիֆի և 1856 թուին հանած հաթթի-հիւմայունի, այսինքն իր հպատակաց համար իր ըրած պաշտօնական խոստմանց հաշիներն պահանջելին։ Թուրքաստան ճանաչօղներն հաւաստի են, որ մահմէտական և քրիստոնեայ տարերաց մէջ ինքն իրեն խաղաղութիւն ըլլալն անհնարին է. ըստ որում Թուրքաց կառավարութիւնն ոչ ըստ բաւականին զօրաւոր է, ոչ անկեղծ, որ իր նաեւ ամենահաստատ յանձնառութիւններն կատարէ և իր փաշաներն արդարութեամբ վարուելու ստիպէ։ Մեր զօրքն երկու անգամ ծովերն անցան որպէս զի Թրքաց Տէրութիւնն մօտալուտ ու կատարեալ կործանմանէ ազատեն և վերջ տան այն ջարդերուն, որ երբեմն արիւնլուայ ըրին Ասորիք։ Մեր նպատակն չէր, անշուշտ, սոսկ մեղսակից ըլլալ այն նորանոր կատաղութեանց, որոց ենթակայ եղան Տօրոսի և Մարաշի Քրիստոնեայներն։ Գաղղիոյ Տէրութիւնն, ընդ հակառակն, համակամութեամբ պաշտպան Տէրութեանց, պարզ պայմաններ դրեր էր, որ Թիւրքիան իր հպատակաց արդի կացութիւնն հիմնովին և անյապաղ բարեկարգէր. Գաղղիան այս բարեկարգութեանց գործադրութեան վերայ հսկելու իրաւունք ստացեր է յայն հետէ։ Աւելի եւս, մեր երկրին Արեւելքի մէջ բարեկարգութիւններ սկսելոյ անտարագրելի իրաւունք ունի, իրաւունք, որ անջնջելի յիշատակարանաց և զօրաւոր համակրութեանց վերայ յեցեալ է։

Թուրքաստանի Հայոց շարժումներն ծանրակշիռ են Թուրքաց Տէրութեան վիճակի և այն անխուսափելի հետեւանաց նկատմամբ, զոր դաշնակցել կտան։ Թիւրքիան, իր եր՛ըրի աչագին տարածութեան հակառակ, անստոյգ գոյութիւն ունի։ Այն կեղծ երեւոյթն, որ իր անցեալն կշրջապատէր, ի չէր դարձաւ, և այն կոյծողն, որ դեռ երկու հարիւր տարի յառաջ Եւրոպան շարունակ ահ ու դողի մէջ կրնէր, այլ եւս կանգուն կենալու կարողութիւն չունի բայց եթէ Եւրոպիոյ Տէրութեանց ձեռնտուութեամբ։ Հպատակներն իրենց տիրողներու տկարութենէն օգուտ քաղելով, սկսան շատ տարիներէ հետէ ազատօրէն շարժիլ իրենց կայանաց մէջ, զորս իրենց տէրերն թողուցին։ Այս ամեն այլ եւայլ ազգաց մէջ, որք կայսերութեան պարունակին մէջ կյուզուին, Թուրքերն կռեսնեն որ իրենց ոտից տակ օր ըստ օրէ աճագին խորութեամբ անդունդ կբացուի։ Թուրքաստան բոլորովին այլ և այլ տարերքէ շինուած ըլլալով, կձեւացունէ աւելի արտաքոյ համախմբութիւն մի կրօնքով, ծագմամբ և լեզուաւ տարբեր ժողովրդոց քան թէ մի և եթ ազգայնութիւն, որք և չունին իրենց մէջ այլ իմն յօդ քան թէ հասարակաց ամենախիստ հարստահարութեան շղթան։ Յաղթական և տիրօղ ցեղն, առ առաւելն, հազիւ թէ կայսերութեան բնակչաց մէկ երրորդ մասն կձեւացունէ։ Այնպէս որ Սուլտանի երեսուն և հինգ կամ քառասուն միլիոն հպատակաց մէջ հազիւ թէ տասներկու միլիոն Օսմանցի կհաշուին, մնացեալն Մահմէտականներէ, Քրիստոնեաներէ, Հրէաներէ, նաեւ կռապաշտներէ խառնուրդ մի է, որք իրենց յատուկ դիմագրութիւնն ու ազգայնութիւնն ունին։ Ափրիկէ, ուր Թուրքիան մէկ գաւառ միայն ունի իրօք, — այսինքն Տրիպօլի փոխարքայութիւնն, — Թունիսի և Եգիպտոսի կայսերութեան հարկատուներն, ըստ մեծի մասին Արաբ են, Ղպտի և Հաբէշ։ Ասիա այլ և այլ ցեղերու խառնումն տարօրինակ հակասութիւններ երեւան կհանէ. առանցմէ նախ աւելի շատուորն Արաբներն են, ապա Քիւրտերն, Թիւրքմաններն, Յոյներն, Հրէայքն և այլ շատ կիսատ պռօտ տոհմեր, ինչպէս Արեւորդիք, Եզիդիք, Նսարանիք, Խամայեցիք; Մառօնիք, Դիւրզիք, Լազք, Բօշայք եւայլն, այսպէս ալ եւրոպական Թուրքիոյ գաւառներու մէջ նախ կռեսնուին յոյն և երրայեցի ցեղերու բազմաթիւ երեսփոխաններ, ապա Ռումնիք, Սլաւք և Աղվանք։ Այս վերջին երեք խումբերս Մօլտո-Վալաք, Սերբ և Սեւլեռնցի անուամբ, կարացին իրենց անկախութիւնն գրեթէ պահել ունենալով Դրան անուանական իշխանութեան տակ, իրենց զատ վարչութիւնն, տեղական իշխաններն և ազգային զինուորութիւնն։ Նման վերջապէս Հայերն, որոց քաղաքական ազատութիւնն շատ չպիտի ուշանայ, մանաւանդ յորմէ հետէ Տօրոս լերին անցքն Եւրոպիոյ ուշադրութիւնն անոնց վերայ հրաւիրեցին։ Զէյթունի Հայերն մէկ դաշնակցութիւն կձեւացունեն, որ Թրքաց վերաբերութեամբ նոյն է, ինչ որ Սեւա լեռնցիներունն։ Անոնք դժուարամատոյց լեռներու մէջ ամրացած ըլլալով՝ երբէք Սուլտանի իշխանութիւնն չճանչցան։ Ոչ որ անոնց երկրին կարայ տիրել. և այս Հայերս կպահանջեն, որ Սուլտանի կառավարութիւնն անոնց անկախութիւնն յարգէ կամ գէթ անոնց երկրին չզբաւէ։ Իսկ Կոստանդնուպօլիս, Իզմիր և այլ քանի մի կեդրոններ բնակեալ Հայերն, երբոր տասն տարի յառաջ անոնց այցելութիւն ըրի, գիտեցի, որ անոնք վերածնութեան առաջին նշաններն կերեւցունէին, որ և ողջոյն ազգի ընկերական վիճակին մէջ այժմ կկատարուի։ Ես ինքնին ականատես եղայ անոնց յարատեւ և փոյթ ջանիցն սահմանադրութիւն ունենալու համար, ես ինքնին կարդացի մէկ հաղուագիւտ քաղաքական փութոյ պնդութեան նշաններ։ Այն ատեն չէի հաւատար, որ Զէյթունցւոց, իրենց լեռներու մէջ կատաղի յարձակումն կրօղներու արութիւնն այսպէս փութով պիտի գայ ապացուցանել թէ այս ազգիս զինուորական քաջութիւնն քաղաքական քաջութեան հետ կից կընթանայ, և թէ Արեւելեան Քրիստոնեայք, չեն, ինչպէս շատ անգամ ըսուած է, վատթարացեալ ցեղեր և անկարօղ իրենց անձնական պնդութեամբն գործակից ըլլալ այն փութոյ պնդութեանն, զոր այլք փարձեն պիտի անոնց համար։

Ա.

Հայոց ժողովուրդն այն օրինաց ազդեցութիւնն կրեց, որ կհարկանէ այն տեղերն, որ, կարծես թէ, գաղթականութեան դատապարտեալ են։ Հայ ժողովուրդն, անշուշտ, իր ազգային կենաց կեդրոնն պահեց. և այս կեդրոնէս շարունակ ճառագայթներ ցոլացուց այլ և այլ հակակայ ուղղութիւններու։ Ըստ մեծի մասին խմբեալ Մասիս լերին և Վանայ լճի շրջապատն, որ այս ազգիս բնիկ կայանն էր, նա բազմաթիւ գաղթականներ հաստատեց Եւրոպա, Հնդկաստան և մինչեւ Ասիոյ Արեւելքն (1)։ Արդի գիտնոց նորագոյն գիւտերուն նայելով, Հայերն Արեաց մեծ ընտանիքէն եղեր են, որ աշխարհի տեսարանի վերայ երեւցաւ պատմութեան ամենահին ատենները մի և նոյն ժամանակ երբոր Քուշանաց (1) և Սեմեանց ամենահին ընկերութիւններն նախ բնակեցան Տիգրիս և Եփրատ գետոց հովիտներն։ Եթէ կարելի է հաւատալ այն հին աւանդութիւններուն, որք Մովսէս Խորենացիի գրոց մէջ պահուած են, Հայերն Նինուէի առաջին կայսերութեան ժամանակակից ըլլալու են։ Գէթ անտարակուսելի Քրիստոնէութենէ իրր տասն և հինգ դար յառաջ, և Ասորեստանեայց հետ ի միասին Եգիպտոսի տասնեւութերորդ և տասնեւիններորդ հարստութեանց հարկատու ցեղերու ցանկին մէջ։ Պատերու վերայ եղած քանդակներն ներկայացրեն զանոնք, երբոր Նիլ գետի եզերքն գերի դնացեր կուչխատէին այն հոյակապ շինուածքն կառուցանելոյ համար, զորս Թուտմոսիս Գ. Ամենոփիս Բ. Սեթոս Ա. և անոնց յաջորդներն կանգնել կուտային։ Շատ անգամ, այսինքն մերինէն ութն դար յառաջ, երբոր Եգիպտացւոց տիրապետութիւնն երկար ատենէ ի վեր արեւմտեան Ասիոյն վերցուեր էր և Ասորեստանեայք տիրեր էին նոյն Պետութեան սահմանակից բոլոր գաւառներուն, Հայերն, որ միշտ այլազգի աշխարհակալներու հարկատու մնացեր էին, Նինուէի տիրապետութենէն ազատեցան։ Պարոյր, անոնց նահապետն, Բելեսեայ և Վարբակէսի, անոնց Սարդանապալի դէմ ապստամբելու ատեն, դաշնակցութիւն ընելով, ստացաւ, իր Մեդաց ձոխութեան հիմնադրին ցցուցած ձեռնտուութեան փոխարէն, արքայական պատիւ։ Այսու ամենայնիւ այս ինքնակալութիւնս երկար չքշեց, իրր զի Խորսաբատի պալատի արձանագրութիւններն կյիշեն Արարատայ և Վան նահանգաց Հայերն իբրեւ Նինուէի թագաւորաց հարկատուներ և իբրեւ Սարգոնի և անոր յաջորդաց իշխանութեան հպատակ ազգերուն մասնակից։

(Շարունակելի։) Թարգմանեաց, Բ. Պ.

Հետեւեալ գեղեցիկ երգը, որ մեր երիտասարդ բանաստեղծներէն մին գրած է Զէյթունի վերջին անցից վերայ, հաճութեամբ կմատուցանեմք մեր Արգոյ Ընթերցողաց։ Իսկ Արգոյ Հեղինակին անունը չյայտնելնուս պատճառն այն է միայն, որ չենք գիտեր թէ ինքը կուզէ՞։

ՀԱՅԿՈՒՀԻ

Երգ։

Այն ո՞ր կերթայ զըւարթադէմ
Եւ սուրալով լերանց վըրան.
Փայլուն թեթեւ ոտիցն ի ձեմ
Ուսից վըրայ հերքըն ծըփան։
Արդեօք չըքնաղ եկա՞ւ դարուն
Կամ աւետիս եւ ծիծառնուկ
Թէ ե՛լ հազուէ պարէ Զէյթուն
Ելէք ի դաշտ ծեր, կոյս մանուկ։
Եւ նա խնտում և զարդարուած
Ու նայելով աչխուժարար
Կերթայ ընդ պարս ընկերուհեաց
Փաղել նարկիղ և նունուֆար։
Սակայն ոչ ոք կայ իրեն քով.
Ձայն մը լսուի . . . բայց ծիծառն չէ.
Թուխըը տակ չունի կողով
Ուր որ ծաղկի փունջեր շարէ։

---

(1) Սատագացոյն հաշիւներու համեմատ Հայերն չորս միլիոնի չափ անհատներ կձեւացունեն և այսպէս կբաժնուին։

Թուրքաց կայսրութիւնն Դանուբեան իշխանութիւններն

ու Եգիպտոս մէկտեղ առնելով	2,550,000 (2)
Ռուսաց կայսրութիւնն և Անդրկովկասեան փոխարքայութիւնն	1,220,000
Աւստրիացւոց կայսրութիւնն	25,000
Պարսկաստան և Ատրպատական	170,000
Հնդկաց ցամաքն և Ասիոյ Արշիպելն	25,000
Արեւմտեան Եւրոպա, Ամերիկա եւայլն	10,000
	4,000,000

Ծ. Հ.

(1) Քուշանքն Քուշի Քամայ որդւոյ, ժառանգներն են, որք բնակեցան Տիգրիսի եւ Եփրատայ հովիտներն զատ նաեւ Եգիպտոս եւ Եթովպիա։ Ծ. Հ.

(2) Թուրքաստանի Հայոց թիւն մեզ նուազ կերեւի. մեր առած մանրամասն տեղեկութեանց նայելով Պարոն Լանկլուայի առած հաշիւն այն պատճառաւ ստոյգ Հայոցն ըլլալու է, որք 15 տարեկանէն վեր են եւ Տէրութեան տումարաց մէջ իբրեւ հարկատու արձանագրեալ. որոց վերայ եկեղեցականաց, կանանց, 15 տարեկանէն վար մանկանց եւ օրիորդաց թիւն ալ յաւելցունելով՝ Թուրքաստանի Հայոց երկու անգամ հաշիւն ըստ մեզ գանէ երեք ու կէս միլիոնի պիտի մօտենայ կամ 100,000 աւելի։ Ծ. Թ.

Բոթ մի վրէնց ինչպէս մրրիկ,
Ու Զէյթունի անտառներուն
Ցաղթահասակ դաղան մայրիք։
Ցցուեց առիւծ բաշ դալարուն։
Այն բարձրաբերձ սարից պահպան
Աղատութիւն եկ սրլացաւ,
Հովտաց դաշտաց հիւղից վերան
Թևատարած հովանացաւ։
Արիւք ի դէն. Թուրքն ահարկու
Լոզայ եղբարց արեանն ի ծով.
Արդ ի Զէյթուն վազրս կ'առնու
Արիւնթաթախ ճիրաններով։
Ու կանգնեցան հակայարար
Հաղարաւորք, աչք բոցահար.
Իրենց ահեղ սարից հաւասար
Բարձրացուցած դոռոզ ճակատ։
Բայց ո՞ւր կերթայ այն գեղադէմ
Աղջիկ, թռուցեալ լերան վերան,
Փախուկ թեթև ոտիցն ի ճեմ.
Ուսից վերայ հերքն ծրվան։
Ի՞նչ է այն որ կուրծքն ճնշէ.
— Բոցանը՛ջոյլ զերահ մի լայն.
Ի՞նչ դդուանօք նա համբուրէ.
— Ճակատամուղ երկաթն է այն։
Նա այլ դդուանք և այլ համբոյր
Կուսան անրիծ դեռ չը գիտէր.
Երախայրի սրտին ի բոյր
Ցոլաց միայն ազգին իւր սէր։
Օրհնեալ անմահ դու քաջութիւն
Պըսակ լանջայ ազատութեան
Որ զհերեղէն վառես զուարթուն
Ու զիկոր քնրուշ հայ աղջկան,
Դու մէկ օր մ'ալ յանհուն թևեր
Պիտի թռչիս ի Հայաստան.
Մէկ զէնքով զէնք կանգնես ի վեր
Միասով գլորես Թուրքն կործան։
Տե՛ս ինչպէս քաջ կոյս Հայկուհին
Խրախոյս կարդայ դու բարբառով.
Ցառաջ. մօտ կայ ժանտ թշնամին.
Զէնք վանեցէք կոտորածով։
Տեսին ըսկայք զայն ահաւոր.
Ծափ ըզծափ մեծ աղաղակ
Որոտացին ցըվիհրս խոր,
Կարծես բոմբիւն հանեց կայծակ։
Հայկուհին է, տեսէք ահա.
Կրակներ թափին իւր աչքերէն,
Հայկուհին է որ թռչի գայ
Ինչպէս հրեշտակ ըսպառողէն։
Որպէս շանթից հրավառ նիզակ
Զարնէ կառափ մեր յաղթ լերանց,
Այնպէս զարնենք այն տաղակ
Թրքին գըլուխն արիւնախանձ։
Ինչպէս մըղեալ ի վոթորկայ
Գլորին ժայռից մեր հատորներ
Հապա այնպէս ի մէջ Թրքայ
Իյնանք թաւալ օրհասաբեր։
Հայկուհին է, կորիճ եղէք.
Հայկուհին տայ խրախոյս յորդոր,
Ժանտից վերայ հուր տեղացէք
Մինչև մոխիր դառնան բոլոր։
Ու շանթեցին. հարցէք ո՞ւր է
Այն բազմամրոխ Թըրքին բանակ.
— Սեափրփուր շունչն արձակէ
Զէյթունցիին ոտքերուն տակ։
Այդ կոյսն աղուոր ուստի՞ կու դայ
Թռուցեալ զըւարթ լերանց վերան.
— Պատերազմէն նա կու դառնայ.
Հերայ վերայ դարնիք շողան։

Մասիս լրագրին միջոցաւ հրատարակուած պաշտօնական յայտարարութենէ մը հետևեալը կ՚քաղենք։

« Ակէ քանի մը ամիս առաջ Սորբ վանուց Տ. Յարութիւն քահանայն տիրացու Յոհաննէս անուն պատանւոյն հետ մայրաքաղաքս կը հասնի Ս. Երուսաղէմ ուխտի երթալու դիտմամբ։ Այս քահանայն մինչև համբոյ ելնելը իւր դպրին հետ որ և իսկ չարժատիթով մայրաքաղաքիս մէջ թաղէ թաղ բաւական ժամանակ թափառելէն ետև, Գոմ-Գարուի կողմերն ալ կուգայ և պատահմամբ իւր դպրին քաղաքակից ծանօթներու հանդիպելով, կ'ուզի թողուլ պատանւոյն որ բարեկամացը հետ տեսութիւն ընէ։ Այս ժամանակ՝ ոմանք զարմացմամբ՝ — Վա՛յ, ի՞նչպէս հոս եկար Հոռոմ, ըսելով՝ կեղծ տիկացութիւն հարցուփորձ կընեն։ Կարծեցեալ դպիրը կաղաչէ կը պաղատի որ իւր ով ըլլալը դաղտնի պահեն. և մինչդեռ այս պարագայիս վրայ քահանայն իւր ճամբորդութեան պատրաստութիւններն աւելի ևս կաճապարի տեսնել, յիշեալ Հոռոմի ազգականներէն ոմանք Տեղապահ սրբազանին բողոք կը մատուցանեն քահանային դայթակղեցուցիչ ընթացիցը դէմ՝ յայտնելով թէ Տ. Յարութիւն քահանային հետ եկող սպասաւորը կամ դպիրը աղջիկ է. թէ զանի խաբէութեամբ իւր ընկեր երիրէն առեր է Երուսաղէմ տանելու. թէ ինչպէս իրենք՝ նոյնպէս ծնողքը՝ որ զանի քանի ամէն ի վեր կը փնտռեն, հաւանութիւն չունին որ այն քահանային հետ ճանապարհորդէ. և թէպէտ շատ յորդորեր են Հոռոմը իւր դիտաւորութենէն ետ կենալ, սակայն քահանային հետ խօսքը մէկ ըսած ըլլալուն՝ իրենց խորհուրդը և յորդորը մերժեր է։

» Այս յայտարարութիւնը ընելով՝ բողոքարկուք անմիջական տնօրէնութիւն մը կը խնդրեն։

» Տեղապահ սրբազանը՝ այս անլուր իրողութեան հաղիւ հաւատ ընծայելով՝ թէ՛ քահանայն և թէ ծպտեալ օրիորդը Պատրիարքարան բերել կուտայ և հարցուփորձ ըլլալով՝ ակներև նշաններէ և կարծեցեալ պատանւոյն խոստովանութենէն կը հաստատուի՝ որ արդարև Յոհաննէս անուամբ անձը առնական հագուստով աղջիկ մ'է, որ քահանային հետ գաղանագողի շատ մը քաղաքներ և գիւղեր պտըտելէն ետև՝ Կ. Պոլիս եկեր է Ս. Երուսաղէմ գնալու ուխտով։

» Այս գործին մանր քննութիւնը խառն ժողովոյ առաջին կը ձգուի, և Տ. Յարութիւն և Հոռոմ Փրկիչ կը զրկուին։

» Հոռոմ աղջիկը Բաղիշու և Մուշի մէջ գտնուած Հատիսն անուն գիւղէն է և քսան տարեկանի մօտ. իսկ Տ. Յարութիւն երբեմն Կ. Պոլիս ջրհանակիր, և անկարգութեանցը համար Իսլիկխանէն բանտարկուած, կերպով մը քահանայութեան կարգը ստանալով Վանայ կողմերը գայեր և Սորբ վանուց վանահայր կարգուեր է աշակերտներ կրթելու մտօք. թէ և ինքը պարզ կարդալ և գրել անգամ չգիտէ։

» Ամոյս 3ին խառն ժողովս կը ներկայանան քահանայն և Հոռոմ, և զատ զատ քննուելով թէ՛ երկոցունց ալ տուած պատասխանները և անոնց ուղեկցութեան պարագաները և թէ ուրիշ արտաքին ստոյգ տեղեկութեանց և վկայութեանց յայտարարութիւնը ամբաստանելոյ գաղտնի յարաբերութիւնը բաւական կը ծանրացնեն, սակայն կարևորագոյն կէտ մը բժշկական ընթացքով լուծելու համար՝ հարկ կըլլայ աղջկան կուսութեան վիճակը քննել։ Ուստի խառն ժողովոյ հաւանութեամբ մեծապատիւ Ատենապետ պէյը իրրև բժիշկ առանձնակի քննութենէ ետև կը յայտնէ թէ յիշեալ օրիորդը իւր կուսական պատիւը արդէն կորուսած ըլլալուն տարակոյս չկայ։ Հետևապէս քահանային դատաստանը, որով անբասիր չէնելը կը նկատուէր, կրօնական մասնաժողովի մը քննութեան յանձնուելու, որպէս զի անոր վրայ եղած կասկածները պարզուին։ Եւ դարձեալ քահանայն և Հոռոմը Փրկիչ կը զրկուին։ »

Ո՞րչափ ողորմելի է վիճակնիս։ Երբեմն Կ. Պոլիս ջրհանակիր, և իր անկարգութեանցը համար Իսլիկխանէն ալ այցելութիւն ըրած անձ մը քահանայ կձեռնադրուի, վանքի մը վանահայր կկարգուի աշակերտ կրթելու մտօք թէև ինք պարզ կարդալ և գրել անգամ չգիտէ, հետը աղջիկ փոքրուոր մը առած վանքէ վանք կպտըտի, և եթէ վերը պատմուած դէպքն իրեն արգելք չլիներ, գուցէ միտքը դրած էր երթալ մինչև Երուսաղէմայ պատրիարքական դատարկ աթոռը բազմիլ, և կարելի է մենք ալ դեռ չպիտի իմանայինք։ Ինչո՞ւ. — Վասն զի դաւառականայ բողոքներուն ըստ արժանւոյն ունկընդրութիւն մատուցանել չկրնալնուս համար՝ անոնք ալ կձանձրանան ի զուր բողոքելէ, և անզգամ մարդիկ ուզածնին կընեն ազատ ազատ։ Փափաքելի է որ աւելի արթուն հսկողութիւն մի ըլլայ դաւառական Հայոց վիճակին վերայ։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

« Օգոստոսի առ Ինքնակալը Իւլայի առաջին ատենանը և միանգամայն երկրորդ կարգի Մէճլիսի պատուանշան շնորհեց Վսեմ. Նաւարար պէյին, որ ինչպէս յայտնի է՝ Եգիպտոսի նոր փոխարքայ Բարձր. Իսմայիլ փաշային կողմէն յատուկ պաշտօնով մայրաքաղաքս եկած է։ »

(Մասիս։)

Արժանապատիւ Տ. Գրիգոր վարդապետ Աւետարանեան Զէյթունցի՝ անցեալ շաբթու մայրաքաղաքէս մեկնեցաւ ի Պոլիս, ուստի կվերադառնայ ի հայրենիս իւր։

— Մանչէսթէրէն կգրեն մեզ թէ հայկական մատրան շինութիւնն աւարտելոյ վերայ է, և շատ գեղեցիկ պիտի լինի. և թէ դէպ ի գալ սմանոյն սկիզբները հայկական ծիսով առաջին Ս. Պատարագը պիտի մատուցուի հոն։

Ի պատէ ուրախակից լինելով Մանչէսթէրի մեր Ազնիւ Ազգայնոց, կշնորհաւորեմք իրենց բարեպաշտական գործը և մշտնջենաւոր յարատևութիւն կմաղթենք անոր։

ՏՕՄԷՆԹԻ ԻՇԽԱՆԸ

ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԸ։

Շարունակութիւն և վերջ (1)։

Շարաթներն ու ամիսները յամր և մենակերպ կանցնէին Տօմէնթի իշխանին համար, որ կդեղերէր իր որջին մէջ։ Գրեթէ բոլոր իր ժամանակը լեռները պտըտելով կանցընէր. բայց երբ աշնանային անձրևները դետնը կակղցուցին, և երբ ձմեռը ձիւնով ծածկեց դաշտերուն մերկութիւնը, ան ատեն պարտաւորեցաւ ապրիլի ծխաշունչ վառարանին առջևը նստիլ, միայնութեան ձանձրութիւնը կրելով. այսու ամենայնիւ սառոյցի օրերը դայլ և աղուէս որսալ կերթար։ Ձմեռուան եղանակը Վրաց գիւղացւոյն թշուառութիւնը կկրկնապատկէ. եթէ նա ծոյլ է, գոնէ աղքատութեան սաստկութեանը անդործութեամբ դիմանալոյ ոյժ ունի, որ իր բնաւորութեան հեղութիւնը կայցնէ։ Տաթօ և իր կինը, ինչպէս կհասկցուի, Տիմիթրիին համար բաւական զուարթարար ընկերներ չէին, զի, իրենց հաւասարին պէս հետը վարուելոյ համար տուած հրամանին հակառակ, անոնք չէին մոռնար Մինկրէլիացւոյն բարձր աստիճանը։ Ուստի անոնց դէմ Տիմիթրի՝ սիրան աղէտաբեր խորհուրդներով լեցուն՝ լուսակայ կեանք մը կվարէր, սուրն իր վիրացը դարձուցած և վրէժը լուծանելոյ ատթին սպասելով։ Ի՞նչպէս պիտի լուծէր այդ վրէժը։ Տակաւին ինքն ալ չէր գիտեր, բայց նախանձարեկին համբերող է յամախ, և գիտէ իւր որսը հսկել։ Անցելոյն պատկերը, իւր երջանկութեան յիշատակները, իւր սիրոյն և պատուոյն եղած նախատինքը, բոլորն իր երևակայութեան առջև կթռչտին ձմեռուան երկայն ժամերուն մէջ։ Մօտի ճանապարհին վերայ արպոյի (սայլ, արապա) մը դդրդիւնը կամ ձիոյ մը ոռնոցանն առաջին պէս՝ խլոյն հիւղին դուռը կելնէր, տեսնելոյ համար թէ Կրիկորի՞ն է։ Այս վերջինը՝ մարտ ամսոյ մէջ սաստիկ անձրևոտ առաւօտ մը ժամանեց մինչև ոսկորները թրջած։ Տիմիթրի յօնքը պատռելով դէմը վազեց, և անկէ խմցաւ որ Վամիրան գրեթէ ամեն օր իշխանուհւոյն այցելութիւն կընէր, և քիչ ժամանակէն հայկական եկեղեցիէն պիտի զատուէր։ — Լաւ, ըսաւ իշխանը խղդուկ ձայնով մը. եկոր տաքցիր։

Տակաւին հինգ ամիսը նոր ըմբնցած էր, երբ Տարխա իւր սդոյ հագուստը հանեց. վանորոյ բամբասանքն ու գրպարտութիւնն իրենց բոլոր թոյնը թափեցին անոր դէմ. սովորական եղաւ իրեն ներկայութիւնը Տիխսու մեծատանց սրահներուն մէջ՝ որոց բոլորին դռները կը բացուէին իր առջև, երբ յանկարծ հասարակաց շշունջը նորէն արթնցաւ, մանաւանդ բարձրատիճան ընկերութեանց մէջ, թէ Տօմէնթի իշխանուհին մօտերս պիտի ամուսնանայ Վամիրան Հայուն հետ։ Ի՜նչ գայթակղեցուցիչ բան։ Այրի մը ամուսնանայ, և Վրաց իշխանուհի մը Հայ մը առնէ, թէև Վրաց կրօնքն ընդունած։ Իսկ Հայերն Երևանու հրապարակը ժողովուած՝ իրենց դրօշները կմոռնային՝ որ հազար ձևերով նզովեն երդմնազանց Վամիրանը. և Վրացիք կկոծէին՝ տեսնելով որ եւրոպական գաղափարներն իրենց բնաշխարհիկ հինաւուրց ծառին վերայ պիտի մազլցէ։ Տօմէնթի իշխանը Կրիկորիին իմացաւ հարսանեաց հանդիսին կատարուելոյ ճիշդ ժամանակը, և ըսաւ անոր ժպտելով. — Կրիկորի, այն օրն առտուանց կանուխ ինծի ձի մը պէտք է. և մինակուկ քու տունդ պիտի դամ, ուր դուն ինծի պիտի սպասես։ Հոն երկար մօրուքս պիտի կորեմ և պիտի հագնիմ այն լաթերը՝ որ դագաղին մէջ եղած ատենս հագած էի։ Ա՛լ ժամանակն է որ իշխան լինիմ։

— Լա՛ւ, պատասխանեց ծառան, կարծելով թէ իւր տէրը վերջապէս վախճան պիտի տայ իր տաժանմանցն ու երկիւղներուն։

Դէպ ի օգոստոս ամսոյն մէջտեղերը՝ երեկոյեան ժամը վեցին՝ Վրաց ազնուական ընտանիքները Տարխա իշխանուհւոյն հոյակապ ապարանքը կխռնէին։ Անուշահոտ

---

(1) Տե՛ս Փարիզ, թիւ 80, 81, 83, 85 և 86։

մոմերուն լոյսերը կշողային սուտակունց (գլրմրզը եագուր) և ադամանդից վերայ. բազմաթիւ սպասաւորք առատօրէն կմատուցանէին հրաւիրելոց Պարսկաստանի պտուղներ՝ Թուրքաստանի բաղցրաւենիք՝ կարկանդակներ՝ Կա